

8027



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«17» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 134 - 24

Նախաձեռնող՝

«ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ
ք. Երևան, Շենգավիթ, Ս. Զորավարի փ./46 շ./5 բն

Գործունեությունը՝

Ջիլի կոնգլոբրեկցիաների արդյունահանման
աշխատանքներ
Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 134 - 24

«17» հուլիսի 2024թ.

Ջիլի կոնգլորեկցիաների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն

Տեղադրման վայրը՝


Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Ջիլ բնակավայր

Ներածական մաս. «ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Ջիլի կոնգլորեկցիաների հանքավայրի արդյունահանման աշխատանքներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս. Ջիլի կոնգլորեկցիաների հանքավայրը գտնվում է Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայրի վարչական շրջանում՝ բնակավայրից 2.6 կմ հյուսիս-արևելք: Հանքավայրը Ճամբարակ քաղաքից գտնվում է 25 կմ հեռավորության վրա, հանքավայրի անմիջական հարևանությամբ են անցնում Սևան-Վարդենիս երկաթուղին, ավտոխճուղին, իսկ մոտակա Ջիլ երկաթուղային կայարանը հանքավայրից գտնվում է 10 կմ հարավ-արևմուտք:

Սևանա լիճը գտնվում է հանքավայրից 5.8 կմ հեռավորության վրա:



Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին սենոնի ու ստորին էոցենի հասակի նստվածքային և ստորին միջին էոցենի հրաբխածին նստվածքային առաջացումները:

Օգտակար հանածոյի հատվածում լայն տարածում ունեն վերին սենոնի հասակի մանրաշերտային կրաքարերը, փխրուն մերգելները, ավազաքարային կրաքարերը, հիմնական ապարները ներկայացված են կավային կրաքարերով:

Հանքավայրի տարածքը տիպիկ լեռնային է, ռելիեֆի հիմնական լեռնագրական կառուցվածքը Սևանի լեռնաշղթան է:

Բուսական աշխարհը բնութագրվում է տափաստանային խոտային ծածկույթով:

Հայցվող տեղամասի մակերևույթը, հատկապես օգտակար հանածոյի մարմինը լերկացած է, հողաբուսական շերտը գրեթե ամբողջությամբ բացակայում է:

Հանքավայրի շրջանում, տարածքում սողանքային մարմիններ կամ սողանքածին երևույթներ առկա չեն:

Տարածքը չի առնչվում հատուկ պահպանվող, անտառային, կամ ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հետ, չի գտնվում պատմամշակութային հուշարձանների սահմաններում:

Հայցվող տեղամասը գտնվում է Ջիլ գետի վերին հոսանքներում, գետը գտնվում է հանքավայրից հարավ-արևմուտք մոտ 1.2 կմ հեռավորության վրա: Ջինար գետը՝ Ջիլ գետի վտակը հոսում է հանքավայրից 20-100 մ հեռավորությամբ:

Ջրաերկրաբանական առումով Ջիլի հանքային շրջանը սակավաջուր է:

Հանքավայրի տարածքում գետնաջրեր չեն հանդիպել: Անմիջապես բացահանքի տարածքը թափվող անձրևային ջրերը հեռացվում են ինքնահոս կերպով և ներծծվում ճաքերի միջով:

Ջիլի կոնգլոբրեկցիաների հանքավայրի պաշարները հաստատվել են ԷԲՊ նախարարության ՕՀՊԳ 2012թ. մայիսի 18-ի թիվ 326 որոշմամբ:

Հանքավայրի կոնգլոբրեկցիաները բնութագրվում են գործնականում կայուն որակական ցուցանիշներով և համապատասխանում են «Блоки из горных пород для производство облицовочных, архитектурно-строительных, мемориальных и других изделий» 9479-98 ԳՈՍՏ-ի «Շինարարական քարերից, բազալտներից և տրավերտիններից» 100-95 ՀՍՏ-ի տեխնիկական պահանջներին ու կարող են օգտագործվել բլոկների և երեսապատման սալիկների արդյունահանման համար:

Տեղամասի աշխարհագրական կոորդինատներն են՝

Հյուսիսային լայնության- 40° 28' 47"

Արևելյան լայնության- 45° 29' 00"


Հայցվող ընդերքի տեղամասի կոորդինատները ARM WGS-84 (ARMREF 02) համակարգով, որը ներառում է հայցվող օգտակար հանածոն և բացահանքը հետևյալն են՝

1. Y=8540913 X=4482448 2. Y=8540959 X=4482352, 3. Y=8541011 X=4482408

4. Y=8541107 X=4482412 5. Y=8541136 X=4482371, 6. Y=8541152 X=4482337

7. Y=8541119 X=4482255 8. Y=8541082 X=4482233, 9. Y=8540992 X=4482208

10. Y=8540947 X=4482218 11. Y=8540932 X=4482240, 12. Y=8540868 X=4482343



Ռելիեֆի մակերևույթին հայցվող հաշվեկշռային պաշարների ծայրակետային կորդինատները ARM WGS-84 (ARMREF 02) համակարգով հետևյալն են՝

1. Y=8540980.6641	X=4482209.9810	2. Y=8540985.2425	X=4482214.9059
3. Y=8540989.8854	X=4482227.6064	4. Y=8540989.2282	X=4482248.5686
5. Y=8540944.2146	X=4482312.1078	6. Y=8540937.1701	X=4482341.5565
7. Y=8540936.6675	X=4482370.7836	8. Y=8540941.2174	X=4482389.1115
9. Y=8540914.6973	X=4482444.4578	10. Y=8540882.9491	X=4482366.3268
11. Y=8540884.0683	X=4482328.6175	12. Y=8540905.9869	X=4482283.6091
13. Y=8540933.7400	X=4482238.0004	14. Y=8540947.4724	X=4482223.2399
15. Y=8540971.5533	X=4482212.0124		

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից՝ տեղամասի մշակումը նախատեսված է բաց լեռնային աշխատանքներով:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին լցակույտերի տեղափոխումով:

Բացահանքը կունենա հետևյալ պարամետրերը՝

- օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարների քանակը- 312431 մ³,
- արդյունահանվող պաշարների քանակը- 312431 հազ. մ³
- մակաբացման ապարների ծավալը- 935348 մ³,
- բացահանքի օտարման մակերեսը- 4,2 հա

Հանքավայրի շահագործման ժամկետը կկազմի 19 տարի:

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ արդյունահանման՝ կկազմի 17000 մ³:

Բացահանքի շահագործման ընթացքում օգտակար հանածոյի կորուստներ տեղի չեն ունենա:

Բուլդոզերային աշխատանքները բացահանքի շահագործման ժամանակ կայանում են՝ դատարկ ապարների և արտադրական թափոնների տեղափոխում և կուտակում բացահանքում ու լցակույտում, ինչպես նաև բլոկների դեպի արտադրական հրապարակ քաշում: Դրանց տարեկան ծավալները կկազմեն 64600 մ³, 51000 մ³ և 3400 մ³:

Հանույթաբարձման աշխատանքներից առաջ կկատարվի ապարների նախնական փխրեցում՝ մեխանիկական եղանակով:

Արտադրական թափոնների և դատարկ ապարների բարձումը տրանսպորտային միջոցների մեջ նախատեսվում է կատարել 1.2 մ³ շերտի տարողությամբ CAT-322L մակնիշի էքսկավատորի միջոցով:

Բլոկների կոպիտ մշակումը, համապատասխան ձև տալու (շտկամշակելու) համար նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով OM-7 մակնիշի հարվածապոկիչ մուրճերի միջոցով:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով Զիլ գետից (լիազոր մարմնից ջրօգտագործման թույլտվություն ստանալուց հետո)՝ օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեառաջացման կանխման աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով կրելով:



ZIL KO-713-01 (ZIL-431412) մակնիշի ջրցան-վճացող մեքենայով, իսկ խմելու ջրի մատակարարումը՝ ՍՊ-ԵԼԵ-1.4 ջրի ցիստեռնով՝ Զիլ բնակավայրի ընդհանուր ջրամատակարարման ցանցից՝ պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրի շահագործման հետևանքով տնտեսությանը հասցված ընդհանուր տնտեսական վնասը կկազմի 11736565 հազ. ՀՀ դրամ/տարի:

Օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են տեխնածին ճնշումներ մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Բացահանքից մթնոլորտ արտանետվող փոշու և գազերի աղբյուրներն կհանդիսանան՝ բացահանքը, տրանսպորտը, լցակայանները:

Օդային ավազան արտանետվող վնասակար նյութերը կլինեն՝


- անօրգանական փոշնի /օգտակար հանածոյի անջատումը զանգվածից, բուլդոզերայի, բարձման և տրանսպորտի աշխատանքներից, լցակայաններից/,
- ազոտի և ածխածնի օքսիդներ և ածխաջրածինները /դիզելային և բենզինային վառելիքով աշխատող մեքենաներից/:

Հանքավայրի շահագործումից մակերևութային և ստորերկրյա ջրերի վրա ազդեցություններ չեն լինելու, քանի որ ջրային արտահոսքեր առկա չեն: Հանքավայրի շահագործման ընթացքում ջրային արտահոսքեր տեղի չեն ունենալու:

Հանքավայրի արդյունահանման և լեռնակապիտալ աշխատանքների իրականացման փուլերում տարածքի կենսաբազմազանության վրա վնասակար ազդեցություն կարող են ունենալ բացահանքից օգտակար հանածոյի հանման-բեռնման աշխատանքների աղմուկը, ցնցումները, փոշին, ինչպես նաև տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերը և դիզելային վառելիքի, քայուղերի թափվածքները: Գնահատման հաշվետվության բնապահպանական միջոցառումների ցանկում նախատեսված են հատուկ միջոցառումներ, որոնք կբացառեն արդյունահանման աշխատանքների ազդեցությունը շրջակա տարածքների բուսատեսակների և կենդանիների վրա:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ են հանդիսանում բացահանքն ու լցակայանը: Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 797 ԲԱ (համաձայն գործող նորմերի), հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից, ձորակներով լավ մասնատված ռելիեֆը, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտի-ների համար սահմանված նորմերի (45ԴԲԱ) սահմաններում:

Նախատեսվող գործունեության ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդներ, բանեցված շարժիչների յուղերի թափոններ, բանեցված օդաճնշիչ դողեր, կազմակերպությունների կենցաղային տարածքներից



առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի), որոնց վտանգավորության դասի, ծածկագրերի ըստ «Թափոնների ցանկի», քանակների, ծավալների հսկողության համար նախատեսվող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ բացահանքի, արտադրական հրապարակի և լցակույտի լեռնատեխնիկական վերականգնումները կիրականացվեն բացահանքի շահագործման ավարտից հետո՝ բուլդոզերով հարթեցման միջոցով: Հարթեցումը կկատարվի բացահանքի հատակի ողջ մակերեսով՝ արտադրական հրապարակը, լցակույտը, ընդհանուր մակերեսը՝ 31480 մ:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո կիրականացվի բիոլոգիական ռեկուլտիվացիա, որի համար նախատեսված ընդհանուր գումարը կկազմի 314800 ՀՀ դրամ: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը՝ 2160120 ՀՀ դրամ:

Ըստ գնահատման հաշվետվության՝ նախատեսվում են նաև արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումներ և ծրագրեր, որոնք նկարագրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ նախատեսված են շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր վնասակար ազդեցությունների մեղմացմանն ու նվազեցմանն ուղղված բնապահպանական և մշտադիտարկումների ծրագրեր, որոնք նկարագրված են հաշվետվության համապատասխան բաժիններում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Գեղարքունիքի մարզի Զիլի կոնգլոբրեկչիանների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Զիլ բնակավայրի ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ: Բնակավայրի ղեկավարի և մասնակիցների կողմից կարևորվել է աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ և դիրքորոշումներ՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, պաշտպանության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Գեղարքունիքի մարզպետարանից, «Հայանտառ» ՊՈԱԿ-ից, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ից, ԳԱԱ Սևան լճի պահապանության փորձագիտական հանձնաժողովից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, մասնավորապես.



տեղեկատվության համաձայն՝ Ընկերության կողմից տրամադրված կորորդինատներով հայցվող տեղամասը չի համապատասխանում 2022 թվականին ներկայացված նախնական գնահատման հայտով ներկայացված կորորդինատներին: Հայցվող տեղամասն ամբողջությամբ ներառում է պետական սեփականություն հանդիսացող ջրային, գյուղատնտեսական և անտառային ֆոնդի հողեր: Բացի այդ, հայցվող տեղամասով է անցնում մարտական դիրքեր տանող գրունտային միակ ճանապարհը:


Հանքավայրի արդյունահանման տեղամասի տարածքի մոտ՝ 2.73 հա հանդիսասնում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կառավարման ներքո գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային հող (թփուտ):

Կարևորելով վավերացված միջազգային պայամանագրերով (Հայաստանի Հանրապետության կառավարության 2021թ. ապրիլի 22-ի «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030թթ. ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» N°610-Լ որոշում) պետության ստանձնած պարատավորությունները, ներկայումս անտառապատման աշխատանքների կատարման նպատակով իրականացվում է համայնքների կողմից հողատարածքների հատկացման գործընթաց:

Հանքավայրի տարածքը գտնվում է Սևանա լիճ թափվող Զիլ գետի անմիջական հարևանությամբ և հանքավայրի շահագործումը բացասական ազդեցություն կունենա գետի, ինչպես նաև լճի էկոլոգոսանիտարական վիճակի վրա: Ներկայումս EU4Sevan ծրագրի շրջանակներում ընթանում են «Սևան» ազգային պարկի» նոր կառավարման պլանի մշակման աշխատանքներ, համաձայն որի՝ նշված տարածքը նախատեսվում է ներառել «Սևան» ազգային պարկի» սահմաններում, որտեղ առկա են գիհու նոսրուտներ:

Զիլի կոնգլոբերեկչիաների հանքավայրի տարածքը գտնվում է Զիլ բնակավայրի խմելու և ոռոգման ջրերի սկզբնաղբյուրների անմիջապես հարևանությամբ, ինչպես նաև տեղանքում հանդիպում է՝ կենդանիների ՀՀ Կարմիր գրքում գրանցված «Հայկական լեռնատափաստանային իժ Vipera (Pelias) eriwanensis» տեսակը:

Ելնելով վերոնշյալ հիմնավորումներից, գործունեության իրականացման ընթացքում հնարավոր առկա բարձր ռիսկերից, պետք է նշել, որ նախատեսվող գործունեության իրականացումը նշված տարածքում համարվում է ոչ նպատակահարմար, քանի որ գործունեության իրականացման արդյունքում կարող է ուղղակի կամ անուղղակի



բացասական ազդեցություն ունենալ Ջիլ բնակավայրի խմելու և ոռոգման ջրերի սկզբնաղբյուրների և Սևանա լճի էկոհամակարգի վրա:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերը նշված պատճառաբանական եզրահանգումները՝ «ԱՐԱՄ-ՇԻՆ 2007» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլի կոնգլոբրեկցիաների արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Նելլի Նասիրյան